ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան 14.03.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ 08/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ 08/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Անտարես» ՍՊԸ-ի 2014 թվականի մարտի 10-ի գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 49-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Անտարես» ՍՊԸ-ի կողմից 10.03.2014թ. գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՎԾ-ՇՀԱՊՁԲ-11/3-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.02.2014թ. «Անտարես» ՍՊԸ-ի հետ N 14-րդ, 17-րդ, 18-րդ և 28-րդ չափաբաժինների մասով պայմանագրի կնքման գործընթացը մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքի վերաբերյալ որոշում կայացնելը կասեցնելուն ուղղված ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել:
2. Կասեցնել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և «Անտարես» ՍՊԸ-ի միջև պայմանագրի կնքման գործընթացը՝ մինչև ԳԲԽ 08/14 բողոքը քննող հանձնաժողովի կողմից բողոքի վերաբերյալ որոշում կայացնելը:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ազգանուշ Ֆրանգյան

Անդամ՝ Վահե Բաբայան